ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Սահակ Լավրենտի Գյուլինյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) գնումների գործընթացների վերահսկողության վարչության փորձագետ աշխատելու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ վարչապետին մշտադիտարկումների միջոցով առաջարկություններ ներկայացնելու նպատակով իրականացրել եմ ստացված տեղեկությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների, փաստաթղթերի և հաղորդումների ուսումնասիրություն, վերլուծություն և ամփոփում: Մասնավորապես՝ ներգրավված եմ եղել ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ԳՏՏԶ ԾԻԳ) կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում իրականացված մշտադիտարկման աշխատանքային խմբում, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար կազմակերպված թունելների պահպանման և սպասարկման աշխատանքների գնման ընթացակարգի շրջանակում իրականացված մշտադիտարկման աշխատանքային խմբում, Էջմիածնի «Ծիծեռնակ» թիվ 13 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված կապալային աշխատանքների գնման ընթացակարգի շրջանակում իրականացված մշտադիտարկման աշխատանքային խմբում, Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի ոռոգման համակարգի վերակառուցման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի մշտադիտարկման աշխատանքային խմբում, իրականացրել եմ նաև գնման ընթացակարգերի հրավերների ընթացիկ վերլուծություն և պատվիրատուներին արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ գրավոր առաջարկությունների ներկայացում,
2. Ծառայության ղեկավարի հանձնարարագրի հիման վրա ներգրավված եմ եղել ուսումնասիրությունների իրականացմանը, մասնավորապես՝ «Ջրառ» ՓԲ ընկերությունում իրականացվող ուսումնասիրության շրջանակում ներգրավված եմ ուսումնասիրություն իրականացնող խմբի կազմում,
3. Իրականացրել եմ ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականների կատարում, մասնավորապես՝ ներգրավված եմ եղել «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ում «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի մրցույթի կազմակերպման աշխատանքների շրջանակում իրականացված մշտադիտարկման աշխատանքային խմբում,
4. Իրականացրել եմ այլ ընթացիկ և չպլանավորված աշխատանքներ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության գնումների գործընթացների վերահսկողության վարչության փորձագետ՝

Սահակ Գյուլինյան
« 11 » օգոստոսի 2023թ.